

Հ. ՄԱՆՈՒՅԼ ՎՐԴ. ԹԱՇՃԵԱՆ

(1889 – 1977)

Հ. Մանուէլ Վրդ. Թաշճեան՝ նախապատերազմեան Հին սերունդի սակաւաթիւ ներկայացուցիչներէն էր, որոնք Հայրենի երկրին արեւով անած ու մեծցած, 1915ի մեծ աղէտէն տառնեալ մը տարին ներ առաջ մուտք գործած էին Ս. Ղազարի խաղաղ յարկէն ներս, իրենց հետ բերելով մեր բնաշխարհին ամբողջ ջերմութիւնը, զինուորագործելու համար Մխիթար Աթբազօր հողեւոր որդիներու շարքին, ի սպաս հայ ժողովուրդի հողեւոր լուսաւորութեան:

Սարբերդի ոսկեղէն դաշտին խոնարհ պտուղն էր ան, հայ հողի հարաշատ զաւակ, իր պարզմտութեամբ եւ երկիւղած հաւատքով ցայտուն, իր խոշոր աչքերուն բարի նայուածքով առինքնող, ու մանաւանդ՝ հաղորդական եւ անկեղծ բարութեամբ առլցուն:

Վաղեմի միանձնեւոր իսկական տիպար մը, (դիմագիծով՝ նման կը նկատուէր Մխիթար Աթբազօր), աղօթանուէր հողեւորական մը, վանական արքայրոյ աւանդութիւններուն ծէսով անած, որ հակառակ՝ իր ձեռնադրութենէն ետք՝ աւելի քան յիսնամեակ մը Ս. Ղազարէն հեռու ապրելուն, Մեծաւորներու կարգադրութեամբ՝ նուիրուած կրթական առաքելութեան, բաղմաթիւ տարիներ պաշտօնավարելով դպրոցներու եւ ընծայարաններու մէջ, Վենետիկէն Ադրբայձան, Միլանէն Երուսաղէմ, Հալէպ ու Պէյրութ, անաղարտ պահած էր միշտ վանականի իր վեղարը եւ հողեւան ներամփոփ ջերմութիւնը, պարզունակ աստուածսիրութեամբ բորբոքուն:

Հ. Մանուէլ Վրդ. իր սրտէն քարոթեան եւ անորոյ պայծառ ճառագայթ մը կը փոխանցէր անպատճառ ամէնուն, ինչպէս կը վկայեն իր քաղմաթիւ աշակերտները, որոնք այսօր աշխարհի զանազան կողմերը ցրուած, ժառանգած են իրմէ յոյսի շիթ մը, մխիթարութեան մասունք մը: Արեւելքի մէջ, իր երկարամեայ առաքելութեան շրջանին, մանաւանդ Լիբանանի մէջ, փնտրուած ու յարգուած խոստովանահայրն էր Հ. Մանուէլ Վրդ. որ հողեւորով խորհուրդներով գիտէր անտեսարար ուղղել եւ առաջնորդել հաւատացեալ հողիները՝ Աստուծոյ ճանապարհին մէջ: Պարզուկ, խոնարհ, կանոնաւոր ու ան-

սեթեւեթ կեանքի վկայութիւն մըն էր իրենը, ջինջ վկայութիւն մը Աւետարանին, Աստուծոյ ձայնին, որ իրմով արտերու մէջ կ'արձագանգէր՝ լուիկ մնջիկ:

Ու այդպէս ալ անաղմուկ՝ Հ. Մանուէլ Վրդ. հեռացաւ այս աշխարհէն, վաստակներով բեռնաբարձ սալի մը վրայ, ձմեռնային մշուշին մէջ ծածկուած, ինչպէս միշտ սիրած էր ապրիլ՝ անծանօթ ու խոնարհ, հեռու մարդոց աչքերէն ու պատիւներէն, անմեղուկ ժպիտի մը տակ ծածկելով միշտ իր մեծամեծ արժանիքները՝ բաղմամբեայ ուսուցիչի եւ մանաւանդ անխոնջ ու ներհուն դաստիարակի:

Հ. Մանուէլ Վրդ. ի առաքելական կեանքի նախասիրած ասպարէզը՝ յատկապէս փոքրիկ մանուկներու դաշտն էր. որպէս սրբազան սերմնացան՝ Յիսուսանման բարութեամբ կ'աւանդէր անոնց բարի ու քրիստոնէական վայել կեանքի օրէնքները, եղբայրական սիրով օծուն մթնոլորտի մը մէջ, եւ յաճախ զուարճալի պատմութիւններով համեմուած քաղաքավարութեան դասեր կու տար անոնց. կը բանար անոնց փոքրիկ արտերուն դիմաց՝ Աւետարանին զաղտնիքները, կը բացատրէր հողեւոր կեանքի տարրական գիտելիքները, անոնց մաքացատրէր հողեւոր կեանքի տարրական գիտելիքները, անոնց մանուկ սրտերուն մէջ տնկելով՝ աստուածային ծաղիկներ: Համբերունութեամբ կը սորվեցնէր անոնց՝ երկիւղածօրէն սպասաւորել սուրբ Պատարագին, անթերի արտասանել աղմոսները, մէկիկ մէկիկ կը մեկնէր վանական կեանքի կանոնները, որոնց սրահպանութեան շատ նախաձեռնիւր էր եւ հաւատարիմ օրինակ՝ իր աստուածավրօն կենցաղավարութեամբ:

Հ. Մանուէլ Վրդ. ունի քանի մը հողեւորնչ հրատարակութիւններ ալ, բոլորն ալ մանուկներու ուղղուած, Յիսուսի վարքին, առականներուն եւ հրաշքներուն պատմութեան խառնելով գեղեցիկ խորհրդածութիւններ ու խրատներ, աստուածաշնորհ ծաղիկներով վերապրեցնելու համար Ս. Աւետարանը՝ անմեղ հողիներու մէջ:

Բնական շնորհն ալ տւեալ ընտանի նամակագրութեան. իր առաքելավայրերէն շաբթէ շաբաթ ընդարձակ լուրեր ու տեղեկութիւններ կը հասցնէր Ս. Ղազար, եւ յաճախ վանական ու դպրոցական շրջանակէն անդին անցնելով, կը հաղորդէր կարեւոր դէպքեր՝ տեղական անցուղարձերէն, խօսելով կրօնական եւ ազգային հրատապ հարցերու մասին, որոնք հրապարակը կը դրաւէին այդ ժամանակաշրջանին: Մարգարտաշար եւ հատիկ հատիկ իր պարզուկ գիրով լեցւած է քաղմաթիւ տեսողական, նաեւ օրագրական տուեալներով, յատկապէս Ս. Ղազարի մէջ ապրած շրջաններուն, եւ հին արձանագրութիւններէ եւ օրագրական տեսողականներէ հաւաքած է կարեւոր տարրեր՝ Միաբանութեան ժամանակագրութեան համար:

Երիտասարդութեան շրջանին, Հ. Մանուէլ Վրդ. զբաղած է Ս. Ղազար հասնող լրագիրներու (ամսաթերթերու եւ օրաթերթերու)

դատաւորութեամբ, եւ հաստատուող տեսութիւններ լեցուցած է՝ յստակ ցանկագրութեամբ:

Ահա՛ վաստակը այս խոնարհ ու շատ համեստ վանականին, որ մեր սրտերուն մէջ թողուց լարի յիշատակը «հաւատարիմ մշակ»ին, այն ընտիր մշակին՝ որ անտարակոյս՝ համարձակ ու լիարժեք ներկայացաւ երկնքի արքայութեան դռներուն, իր վրայ հրաւիրելով երկնաւոր Հօր հաճութիւնը, լուսեղէն օթեւաններու պայծառութեան մէջ, Մխիթար Աբրահամ երկնաբնակ որդիներու շարքերուն:

* * *

Հ. Մանուէլ Վրդ. Թաշճեան ծնած էր Մեղրէ (Պարբերդ) 1889ի Նոյեմբեր 21ին, խաչատուր եւ Հռիփսիմէ բարեպաշտ եւ ազգասէր ամուլէն. մկրտութեան անունով՝ Պոստով, տեղական դպրոցներու մէջ ուսումով բաւական առաջացած, հայերէնէն գտնաւոր նոյնիսկ Ֆրանսերէնի մէջ, տասնեակեց տարեկանին կու գար Ս. Ղազար, Պարբերդցի ուրիշ պատանիի մը հետ (Ստեփան Ուլուհտեան), որ ապագային Աբրահայր պիտի ըլլար Մխիթարեան Միաբանութեան (1935-1964): Մխիթարեան Հ. Թաշճոս Վրդ. Թովմաճանի առաքելութեան պտուղներն էին այս երկու բարեշնորհ պատանիները (Հ. Թաշճոս Վրդ. ինքն ալ Պարբերդի ոսկեղէն դաշտէն էր): Կառուով կը ճամբորդեն մինչեւ Տրապիզոն, անկէ նաւով՝ Պոլիս. հուսկ՝ Ս. Ղազար կը հասնին 1905ի Սեպտեմբեր 10ին: Ուղեւորութեան մանրամասնութիւններն տւեալ միջադէպերը հաճոյքով եւ յուզումով լսած ենք լուսահոգի Ուլուհտեան Աբրահայր շրթներէն: Մեր երկու պատանիները՝ Տրապիզոնի ու Պոլիսի՝ հիւր կ'ըլլան, մի քանի օրերով, այնտեղի Մխիթարեան Հայրերուն, իրենց սեփական վանատուններուն եւ դպրոցներուն մէջ:

Ս. Ղազարի մէջ, յետ աւարտելու իրենց երկրորդական ուսումները, 1908ի Նոյեմբեր 1ին, միասին կը սկսին կրօնաւորական կեանքի նորընծայութեան շրջանը. 1910ի Նոյեմբեր 13ին, ուխտերով կ'անդամակցին Միաբանութեան, իրենց աւագ դասընկեր ունենալով Հ. Կիւրեղ Վրդ. Քիպարեանը, Պանտրմայէն, որ իրենցմէ երկու տարի առաջ արդէն հասած էր Ս. Ղազար:

Այդ շրջանին, երկրորդական եւ հայագիտական տւումները լըրացնելէ ետք, փիլիսոփայութիւն ու աստուածաբանութիւնն ալ կը դասաւանդուէին Ս. Ղազարի մէջ, հմուտ ու մասնագէտ ուսուցիչ Հայրերու առաջնորդութեամբ:

1915ի Մայիս 23ին, Հոգեպարտեան տօնին օրը, կուսակրօն քահանայ կը ձեռնադրուէին երեք միասին, որոնք նաեւ վերջին ձեռնադրեալներէն էին՝ Գրգ. Գեղամարտի Կիւրեղեան Աբրահայր, որ

1876էն ի վեր դուրս էր Միաբանութեան եւ ձեռնադրած էր շուրջ 65 միաբան: Պատմական թուական մըն էր այդ Մայիս 23ը. կը պատմէին թէ կէսօրուան ճաշէն ետք՝ երբ պարտէզ ելած կը շրջէին, օդին մէջ նշմարած են աւստրիական օդանաւեր, որոնք առաջին անգամ ըլլալով՝ կու գային ուղեւորելու Վենետիկը. նոր սկսած էր Եւրոպական առաջին պատերազմը:

Բայց աւելի ցաւալին կայ. այդ օրերուն, Արեւելքի մէջ, մեր հայրենի հողերուն վրայ, ծայր կու տար ահաւոր ողբերգութիւն մը. նահատակութիւնը հայ ժողովուրդին: Մեր ձեռնադրեալներուն հարազատներն ու սիրելիները, հոն՝ մահուան ճանապարհին վրայ՝ աքաղաղներն ու սիրելիները կ'ապրէին: Իսկ լուրերը չէին հասնիւր Վենետիկ: Հ. Մանուէլ Վրդ. ի ծնողները եւ բոլոր եղբայրները դաժանօրէն կը ապանուէին անօրէն ձեռքերէ, Պարբերդի մօտ, հերոսական նահատակութեամբ: Երկու աւագ քոյրերը միայն՝ ճողպարած ահաւոր կոտորածէն, Անարատ Յղութեան հայ կոյսերու Միաբանութեան անդամադրուած, աւելի ուշ՝ բախտը պիտի տանեալին իրեն հանդիպելու Կ. Պոլսոյ մէջ, 1921ի ամառը:

1916ով կը բացուի Հ. Մանուէլ Վրդ. ի առջեւ առաքելական դաշտը, նախ՝ Մուրատ-Ռափայէլեան վարժարանի մէջ, իբր հակիչ եւ ուսուցիչ. առաջին քայլերն են ապագայ դաստիարակին: 1917ին զինք կը գտնենք հարաւային Իտալիա, Նափոլիի մօտերը, Վարդէ տի Փոմփէյ գիւղը, ուր առժամապէս փոխադրուած էին Մուրատ-Ռափայէլեանի աշակերտները, Հ. Քերոբէ Վրդ. Զրաքեանի առաջնորդութեամբ, հետոս մնալու համար պատերազմի ապառնալիքներէն: Մխիթարեան պատմութեան մէջ, «Գաղթի թուական» անունով արձանագրուած են այդ էջերը:

1918ին, Հ. Մանուէլ Վրդ. Հոռոմ կը գտնուի, Ս. Պողոսի հոգաւոր վանքին մէջ, ուր իրենց նորընծայութեան տարին կ'անցընեն Ս. Ղազարի ԼԸ դասի աշակերտները (այժմ Եպիսկ. Գրգ. Ամասունի, Հ. Սամուէլ Վ. Արամեան, եւն...), առաջնորդութեամբ Հ. Ղեւոնդ Վրդ. Տայեանի, որուն օգնականն է երիտասարդ Հ. Մանուէլը, արդէն իսկ երեսնամեայ:

1919-22 զինք կը գտնենք Ս. Ղազար, ուր կը սկսին հասնիլ յետպատերազմեան առաջին սերունդները, Պոլիսէն. եւ Հ. Մանուէլ կարգուած է վերակացուի օգնական, գրեթէ ծայրէն վերահաստատուելու համար վանական հին աւանդութիւններու շղթան, որ պատերազմին հետեւանքով կոտորած էր: 1922ին, մինչ Արեւելքէն հասնող որբ պատանիներու համար կը բացուէր նոր ուսումնարան մը, Վենետիկի մօտերը, Ֆիլեսոսոյ տ'Արթիքոյ գիւղին մէջ, Հ. Մանուէլ կը զրկուի հոն՝ իբր ուսումնարան: 1923ին դարձեալ կ'անցնի հարաւային Իտալիա, Սուպիաքոյի Բենեդիկտեան մեծ վանքը (Հոռոմի մօտերը), ուր

իրենց նորընծայութիւնը կը կատարէին Ս. Ղազարի ԼԹ. դասի աշակերտները (ներկայիս՝ Ամենապատիւ Կէտիկեան Կաթողիկոս Պատրիարքը եւ ընկերները): Հ. Մանուէլ հոն ալ օգնական է Վերակացուի:

1924-26 կը պաշտօնավարէ Մուրատ-Ռափայէլեանի մէջ, իբր ուսուցիչ եւ հակիչ: 1925-26 տարեշրջանին՝ զինք կը գտնենք Միլանոյ, այնտեղի նորաբաց վարժարանին իբրեւ տեսումնապետ: 1926-29 դարձեալ Մուրատ-Ռափայէլեան կ'անցնի. այս անգամ նաեւ իբր տեսնա ու գործակալ:

1930-34 Հ. Մանուէլ Վրդ. կը գտնուի Երուսաղէմ, ուր ղրկուած էր Մեծաւորներէն՝ կաղմակերպելու համար Մխիթարեան դպրոց, վանատուն եւ ընծայարան. սակայն հոն անհնարին կ'ըլլայ տեւական գործ ստեղծել:

1934ի աշնան, կարճատեւութեան մը համար Վերակացու կը նշանակուի Ս. Ղազարու փոքրիկ աշակերտներուն՝ նորընծայարանի խմբի. եւ խմբի գաւառականներուն:

1936-37 զինք կը գտնենք Եգիպտոս, Աղեքսանդրիոյ նորաբաց Մխիթարեան վարժարանին իբրեւ ուսումնապետ, տեսուչ Հ. Քերոբէ Վրդ. Զրաքեանի գլխավորութեամբ: 1937-46 կը մնայ Հալէպ, իբր ուսումնապետ այնտեղի ալ նորաբաց Մխիթարեան վարժարանին, Հ. Վրթանէս Վրդ. Խանապէտեանի գլխավորութեամբ, որուն անակնկալ մահէն ետք (1945, Փետր. 2), կը շարունակէր վարել դպրոցին տեսչութիւնն ալ:

1946ի միաբանական Ընդհ. Ժողովին համար կու գար Վենետիկ, տասնեամեայ բացակայութենէ մը ետք. այդ առիթով կը ստանար վարդապետական դաւադանի աստիճան. եւ տարի մը կը մնար Մուրատ-Ռափայէլեան վարժարան, իբր գործակալ չէնքին, որ պարապ մնացած էր, աշակերտութեան պակասով, եւ որոշ չափով վնասուած՝ պատերազմին հետեւանքով:

1947ին, Միաբանութիւնը զինք կը ղրկէր Պիքֆայա (Պէյրութի մօտ), ստանձնելու համար այնտեղի նորաբաց Մխիթարեան Ընծայարանի տեսչութիւնը: Հ. Մանուէլ Վրդ. արդէն իսկ բաղմամբայ փորձառութեամբ հարուստ դատարարակ, մանաւանդ Հալէպի Մխիթարեան վարժարանին մէջ իննամեայ անձնուէր աշխատանքով՝ լիովին տեղեակ միջին Արեւելքի կեանքին, միջավայրին ու հարցերուն, յարմարագոյն մարդն էր այս նոր առարկային մէջ: Կատակով կ'ըսէինք՝ Թէ Միաբանութիւնը երբ նոր հիմնարկի մը կը ձեռնարկէր, նոր վարժարան կամ ընծայարան կը բանար, անպատճառ հոն կը ղրկէր Հ. Մանուէլը. այսպէս եղած էր Փիեսոսոյ, Միլանոյ, Երուսաղէմ, Աղեքսանդրիայ, Հալէպ. այս անգամ ալ կ'երթար Պիքֆայայի փոքրիկ Ընծայարանը, որ կը բացուէր Լեւոնալիբանանի զեղեցիկ բարձունք-

ներուն վրայ, 1947ին, Իրաքահայ բարերարի մը՝ Տիար Ժան Փեմպէճեանի նպատակով (նախկին սան Մուրատ-Ռափայէլեանի): Նախաինամութեան յայտնի մէկ օգնութիւնը կը նկատէր այն ատենուան Արքահայրը՝ Գրգ. Սրապիոն Ուլուհոնեան՝ այս բարերարին յայտնութիւնը, որ երեւան կու գար ճիշտ այն շրջանին՝ երբ Միաբանութիւնը մտահոգ էր, պատերազմէն ետք, նոր կոչումներու հրատապ հարցով, եւ ոտքի կուռնան մը կ'որոնէր Լիբանանի մէջ, հակառակ իր տնտեսական շատ անձուկ պայմաններուն: Հին երազ մըն էր, որ յանկարծ կ'իրականանար: Իսկ Հ. Մանուէլ Վրդ. եղաւ Նախաինամութեան այն մարդը, որուն անձնուէր ճիշդերով ու մանաւանդ բաղմամբով եւ աստուածահաճոյ աղօթքներով՝ Ս. Ղազար հասան բաղարդիւն եւ աստուածահաճոյ աղօթքներով Մխիթարի մաթիւ նորանոր պատանի կոչումներ, հետզհետէ լեցնելով Մխիթարի հոգեւոր բոյնը, 1947ի աշունէն սկսեալ: Հ. Մանուէլ Վրդ. տասնեւմէկ տարի պաշտօնավարեց հոն, ունենալով անշուշտ իր ձեռքին տակ եռանդուն ու նուիրեալ երիտասարդ օգնականներ. կաղմակերպեց «Ս. Յովհաննէս Մկրտիչ» Ընծայարանի կանոնադիրքը, օրակարգը, դասընթացը, կրթական ու վանական չէն մթնոլորտը:

1958ի միաբանական Ընդհ. Ժողովին՝ Հ. Մանուէլ Վրդ. կ'ընտրուէր կեդրոնական վարչութեան անդամ ու խորհրդական. այնուհետեւ Ս. Ղազար կը մնար երկու տարի, միաժամանակ վարելով վանքի փոքր աշակերտներու վերակացուի եւ դատարարակի պաշտօնը, վերադառնալով հոն՝ ուրկէ սկիզբ առած էր իր կրթական առաքելութիւնը, ճիշտ քառասուն տարի առաջ:

1960ին անգամ մը եւս կ'առաքուէր Պիքֆայայ, նախկին պաշտօններով՝ Մեծաւորի եւ Վերակացուի, ու հոն կը մնար չորս տարի եւս. տարի մըն ալ (1964-65) լոկ Մեծաւորի պաշտօնով կը հսկէր վանատան: 1965ի Մայիսին կու գար Ս. Ղազար, իր եւ իր դասընկերներուն քահանայութեան յիմամբակի հանդէսներուն մասնակցելու. սակայն դժբախտ անակնկալ մը՝ իր դասընկեր Արքահ. Գրգ. Ս. Ուլուհոնեանի մահը, որ ճիշտ այդ օրերուն կը զուգարդիւնէր՝ չէր Ուլուհոնեանի մահը, որ ճիշտ այդ օրերուն կը զուգարդիւնէր՝ չէր թոյլատրեր որ արտաքին հանդէսներ կատարուէին. եւ այդ նուիրական յիշատակը կ'անցնէր անշուշտ եւ ծածուկ. լոկ արտերու մէջ տօնուած յորելեան մը: Այնուհետեւ, 1965-1970, Հ. Մանուէլ Վրդ. կը մնար Ս. Ղազար, նուիրուած վանքի ժամանակագրութեան վերաբերող իր տեսարանները կարգաւորելու, հին ցուցակներ վերաբնութեւն եւ ճշտելու. միաժամանակ կը վարէր աշակերտներու խոստովանահայրութեան նուիրական պաշտօնը:

1970ին վերջին անգամ մըն ալ զինք կը գտնենք Լիբանան, նորաչէն ընծայարանին (Պէյրութ - Ռաուտա) աշակերտներուն իրեւ խոստովանահայր: Աստուածարեալ ծերունին, աւելի քան ութսունամեայ, մեծ յուզումով կը մասնակցէր, 1972ի ամառը, Ռաուտայի

նորաշէն վանատան բացման արարողութիւններուն, եւ ապառաջի վառ յորհերով օրօրուն՝ կը վերադառնար Ս. Ղազար:

Հ. Մանուէլ Վրդ.ի կեանքին վերջին հինգ տարիները (1972-77) կրնանք անուանել երկնքի պատրաստութեան տարիներ, բառին հարադատ առումով. յարատեւ աղօթքով ու հոգեզմայլ խոկումներով, յաճախ իր դասընկեր Հ. Կիւրեղ Վրդ. Քիպարեանի հետ միասին հոգեշունչ խօսակցութիւններով կ'անցընէր ժամանակը: Մինչեւ վերջին օրերը, ներկայ էր՝ հասարակութեան հետ՝ սրբազան բոլոր արարողութիւններուն, եւ օրինակելի ու անթերի պահպանութեամբ կը յարգէր վանական օրակարգի բոլոր մանրամասնութիւնները, միշտ ուրախ եւ գոհ ամէն բանէ:

Ամէն Ծնունդի իրիկուն, պահ մը իր սենեակը կը հաւաքուէինք վարդապետներս, մեծ մասով իր երբեմնի սաներ, շնորհաւորելու իր անուան տօնը, ու անպատճառ խանդավառօրէն կ'երգէինք, իր իսկ փափաքին վրայ, «Բազմերամբ վեհադունիցն հոյլքն» շարականը, յատկապէս շեշտելով «Քե՛զ էմմանուէլ՝ որ ծնար տղայաբար եւ վերածեր դադբա մարդկան Հօր յորդեգրութիւն»...: Կ'ուրախանար ծերունին, եւ իրեն աղօթքներուն յանձնելով ինքզինքնին՝ որդիական քաղցր պարտականութիւն մը կատարած ըլլալու գոհունակութեամբ կը բաժնուէինք իր սեմէն:

1977ի ամառը կանոնաւորապէս գիւղ գնաց, օղափոխութեան, վանքի աշակերտներուն հետ. վերադարձին, աչնան, Փիղիբական տկարութիւնը հետզհետէ տիրեց վրան. կը գլայինք թէ ՏՅամեայ բարի Վարդապետը մեզ պիտի թողուր: Հակառակ բժշկական ամէն տեսակ խնամքներու, հետզհետէ աւելի եւս հիւծեցաւ. հիւանդանոց փոխադրեցինք, վերջին շաբաթներուն տառապեցաւ՝ անկողին երկար մնալէն եւ թիկունքին ձեւացող վէրքերէն. բայց համբերատար համակամութեամբ կրեց ամէն ցաւ, նեղութիւն ու զրկանք, եւ Դեկտեմբեր 18ի ճիշտ կէսօրին՝ անաղմուկ, լռիկ վախճանեցաւ սուրբի մը պէս, հոգիով թռչելու համար երկինք:

Վանական ամփոփ լուսութեան մէջ տեղի ունեցաւ Հ. Մանուէլ Վրդ.ի թաղումը, արարողութեան բոլոր մանրամասնութիւններով, ինչպէս ինք պիտի փափաքէր, եւ խունկով ու աղօթքով կ'անցնէինք իր գերեզմանը, վանքին վաստակաւոր հին Հայրերու կողքին, յոյսով ապաստելու յարութեան պայծառ առաւօտին: Իսկ առդ. Ծնունդին շատ տխուր հնչեց մեզի համար՝ էմմանուէլի շարականը, եւ արցունքով կ'անցնէինք անոր յանկերգը. «աղաչանօք հայցեմք ի քէն, զննջեցեալսն մեր ընդ սուրբս քո հանգով»:

Հ. ՆԵՐՍԷՍ ՏԵՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ

Հ. ՄԱՆՈՒԷԼ ՎՐԴ. ԹԱՇՃԵԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ*

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔ (պատկերազարդ)

Ա. տարի (տարրական շրջան) տպ. Վենետիկ - Ս. Ղազար, 1930, էջ 62.

Բ. տարի (Եւրոպա եւ Ասիա) տպ. Վենետիկ - Ս. Ղազար, 1931, էջ 147:

Գ. տարի (Ափրիկէ եւ Ամերիկա) տպ. Վենետիկ - Ս. Ղազար, 1932, էջ 118:

ՀԱՄԱՌՈՏ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԵԻԹԱՐ ԱՐԲԱՀՕՐ (Մանուկներու համար)

Ա. տպ. Վենետիկ - Ս. Ղազար, 1950, էջ 112 (պատկերազարդ):

Բ. տպ. Վենետիկ - Ս. Ղազար, 1967, էջ 116 (պատկերազարդ):

ՅԻՍՈՒՍԻ ՎԱՐՔԸ (Մանուկներու համար, օգտակար խորհրդածութիւններով)

Տպ. Վենետիկ - Ս. Ղազար, 1954, էջ 160 (պատկերազարդ):

ՅԻՍՈՒՍԻ ԱՌԱԿՆԵՐԸ ԵՒ ՀՐԱՇՔՆԵՐԸ

Տպ. Վենետիկ - Ս. Ղազար, 1955, էջ 160 (պատկերազարդ):

* * *

ԱՌՏՆԻՆ ԳՈՐԾԱԾՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ (Մատնագրուած օրինակներ)

ՇՈՒՇԱՆ ՄԸ ԽԱԶԻՆ ՎՐԱՑ (Համառօտ կեցնագրութիւն եղբ. Պօզոսիկ Անտոնիկ Փափագեանի (1776-1791), Վենետիկ - Ս. Ղազար, 1967, էջ 36:

ՎԱՐՔ Ս. ԿՈՅՍ ՄԱՐԻԱՄ ԱՍՏՈՒԱԾԱՄՕՐ ԵՒ Ս. ՅՈՎՍԷՓ ԱՍՏՈՒԱԾԱՀՕՐ, Վենետիկ - Ս. Ղազար, 1974, էջ 103:

*) Հ. Մանուէլ Վրդ.ի մասին տե՛ս նաեւ «Հայ Ընտանիք» 1978, թ. 1-2, էջ